

Բայց դժբաղդաբար կան եւս ու-
մանք որ խիստ տկար և անմարդավիւ-
յել խորհրդով կ'ասեն թէ, և Յիրաւի
մեք մեր այս սովորութենին գժգոհ
եմք և կուզեմք թողուլ, բայց չեմք ու-
զեր աղջոց խօսքէն թելագրուած հո-
մարուիլ եւ նոցա կանոնաց հնազան-
դիլ, մեք աղատ եմք և ուղած ժամա-
նակնիս կը թողումք և ուղած ժամա-
նակնիս կը ծխեմք ո:

Այս խօսքը թողումք որ կատարե-
լութեան խօսք չէ. թողումք որ այս
խօսքով ուրիշ անգամ ծխելու կամք
ունենալը եւ գեղ ՚ի մոլութիւն յա-
կամէտ լինելը կը յայտնէ, այլ նաև ե-
րիկիստ է իւր անձնիշխան կարողու-
թեան եւ աղջոտութեան վերայ. կը
կասկածի որ անշուշտ օր մի հրապու-
թիշ առիթներու առջեւ տկարու-
թեամք պիտի խոնարհի, անոր համար
չուղեր հնազանդիլ իրեն խիստ օգտա-
կար եղաղ խրատոց և օրինաց հա-
մարելավ զանանք բռնաբարութիւն ա-
ղատութեան և գերութիւն կամաց .
ըգիսեր ողբամելին որ իւր աղատու-
թիւնը՝ արդէն գերութեան մասնած
է, և օր մի ցաւօք սրափ նկն ալ պիտի
ըսէ. Ո՛չ, ԱՅՍ ՉԱՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ
ԿՈՒԶԵՄ ԶԴԵԼ, ԲՈՅՅ ԶԵՄ ԿԱՐՈՂ
ԹՈՒՈՒԼ.

Ա. Ռ. Պ. Զ. Ա. Կ. Ա. Ն

(Հարաշակութիւն. տես թիւ 10.)

Ինչու որ գործուած մեզք մի,
չարութիւն մի, մոլութիւն մի ըս կոյ
որ նախ մոտաց մէջ ծնունդ առած ըս
լինի, ուստի իրաւամբ մեղքերու եւ
մոլութեանց առաջքն առնելու համար
քրիստոնէութիւնը զանանք սրտէ ու-
մաքէ հալածել կը պատուիրէ: Եւ ով
որ ճշմարդիտ կենաց իրական երանու-

թիւնը կուզէ վայելել, ալէտք է Քրիս-
տոնէութիւնն իւր բոլոր իմաստովը
հասկանայ և անոր օրինաց հնազանդի.
սիրէ քո, տեր Աստուածդ, եւ սիրէ քո,
զնկերդ քո, անձիդ պէս, եւ մի ցանկա-
նար խօսքերը բաւական են մեզ ամեն
բան հասկացնել. բայց առ այժմ այս
թող մնայ, ես դեռ ըսելիք ունիմ:

Բղախուհութիւնը զմարդ յամենաց-
նի անպիտան կ'ընէ. այս վատ խոր-
հրդովէ որ մարդ անուան անար-
ժան մարդիկ՝ իրենց անձը կը մատնեն
այնպիսի գործոց, որ ներհակ են աստ-
ուածային կամաց, որ ընդդէմեն սրբ-
բութեան, որ հակառակ են մարդկա-
յին կոչման, որ թշնամի են ամուսնա-
կան սրբութեան եւ հաւատարմու-
թեան և վերջապէս դահիճ են մարդ-
կային կենաց խաղսղութեան և առող-
ջութեան:

Նեշտասէր մոլին անդուլ անդա-
դար իւր կրից հրապուրած ատենը ա-
ռանց վայրիկ մի ընդդիմանալու, ա-
ռանց վայրիկեան մը նորա դէմ գնելու
կը փութայ որ և իցէ միջոցաւ զայն յա-
գեցնել. բայց ՚ Յանկութիւնը՝ հերիք
է, ըսէր բնաւ. որովհետեւ որչափ
որ տալը աւելցնեա՝ ոչ թէ յանկու-
թիւնը կը մորի, այլ առաւել եւս կը
բարերի: Թերամիտք կարծելով զայն
յագեցնել ամեն գրգռելուն կը փու-
թան ամեն հնարաւոր և բնական ու ան-
ընական միջներով ճարակ տալ. բայց
չն գիտեր որ բնութիւնը միշտ պատրաս-
տական հիւթ չունենար, և որովհե-
տեւ իրենք իրենց անսանձ ցանկու-
թեամբը կը գրգռեն ու կը բռնադա-
տեն զընութիւնը որ օգնէ իրենց յի-
մարութեանը, ուստի ներքին մնեդա-
կան գործարանները թողով իրենց սե-
փական գործը՝ կը փութան, կըշտապին
անարդ վավաշոտին անասնական հա-
ճացքը կատարելու համար՝ աճապարա-

նօր նիւթ պատրաստել . և ահա ներքին ամեն կենսական հիւթեր , ինչպէս արիւնը , ըղեղը , ծուծը , սրտին և երիկամանց պահպանութեան համար սահմանուած ճարպերը և ուրիշ այսպիսի ովելիք ու կենսական հիւթեր կը լուծուին , կը քամուին և կուգան ցանկութեան կիրքն յագեցնելու համար նիւթ մատակարարելու . որով ըսել է թէ կենաց մնուցիչ օրէնքը մաշող և սպառիչ օրինաց պիտի ծառայէ , և ահա այսպէս մարդկային մարմնոյ մնունդը կը պակսի . կամաց կամաց կը նիհարանայ , ոսկորները կը ցուցուին , ջղերուն զօրութիւնը կը պակսին , ընդհանուր ակարութիւն մի կը յարձակի սղորմելին վերայ եւ ը գիտէր պատճառն ինչ է . ստամբուր կը տկարանայ և կը ձնշուի . ստէպ կը ձգուտայ . ներքին կենսական ոգեաց ջերմութիւնը կը պակսի . քանզի զանմոք պահպանող ճարպն և իւղային ու խժային նիւթերը հալած , մաշուած ու վատնուած են . աղիքն ալ բնութեան պէտքն ըստ կարգի արտաքսելու անկարուլ թշուառ հեշտասէրներէն ոմանք որովշնի անտանելի պնդութեամբ կը վւուանան և ոմանք ալ սպառիչ փորհարութեամբ կը տանջուին , որք և կարօտ պիտի վենին միշտ գեղով կատարել իրենց բընութեան կարիքը , որոյ հետեւանքն ալ վեսակար է :

Փքախտութիւնը ինչպէս նուե վիշտախտութիւնը կը տիրէ . քունը երբեմն կը սպառի , երբեմն ալ կը ծանրանայ , երեւակայութեան անկարդութեամբ այլանդակ երազներով անհանդիս կը վենի , ստէպ գիշերային ակամայ գիմութեամբ մէկ այլանդակ աւեստանութեամբ կը մաշուի : Առջեալի տեսարան , մարդկային մարմնոյ չէնքին մէկ այլանդակ աւերացն է այնուհետեւ և ոչ թէ մարդ . նախիքն ու շրթունքը գունատեալ են . լեզուն

բերանն ու որկորը ցամքած . անդեռու ամեն տեսակին ալ ենթակայ է . գլխացաւ՝ միջացաւ՝ և այլն սովորական բաներ են : Դիմաց գոյնը կաւերի . երբեմն սրտի բարախութիւնը կուգայ , աչքին անսութիւնը կը տկարանայ . մինչդեռ երիտասարդի մը ակնսով տես նեղն ամօթ պիտի լինէր , այժմ այն ևս նորաձեւութեան կարգն անցած լինելով պարծանք կը համարին քան թէ անարգանք : Թանջը կամ թթափառութիւնը զայրանալզի մարմնոյն զանազան մասերը կը վտացնէ :

Բայց եթէ այս յիմար արարածը տակաւին՝ զգացատանայ , դեռ շատ սսսկալի հետեւանքներ ունի կրելիք . քանզի կը սկսի կունակի ոսկորը , ծոծրակը , գլուխը և բամբուշա ըստւած անօթը ցաւիլ . թեթեւ շարժմամբ կը հոգնի և առատօրէն կը քրտնի . ասոնց վերայ կը համնի ողնաշարի նեխութիւնը . ընդերկար ոսքի վերայ չէ կարող կանգնիլ . շարունակ նստել կուզէ . մազերը կը սկսին թափիլ , և ահա այն աւեն հասած է նա խիստ մեծ թշուառութեան :

Այսաէս ջղային գրութեան խանգարումէն զանազան սոսկալի արկածներ իրարու ետեւէ կը յաջորդեն . և եթէ զազիք հեշտասէրը տակաւին իւր պիզծ կուռքը պաշտելու յամառի և ը սոսկայ և անցեալ կորուսար գար . մանելու համար հաստատ առաջադրութեամբ չուզէ անմիջապէս փախուլ իւր ընթացքը , ահաւոր գերեզմանն իրեն գողգոջուն սոքերուն առ ջե դարանակալ կը սպասէ . ուր օր մի անժամ մանակ պիտի զլորի ցաւալից կեանք մի անցունելէ վերջը :

Հապտ ուր թողունք հոդեկան կարողութեանց խանգարումը . քանզի ինչպէս ըստինք , ցանկութեան կրից ըստած հիւթը որովհետեւ ըղեղին

Հետ մեծ կապակցութիւն ունի, և որվհետեւ նորա սպառումը ընդհանուր ջղային գրութիւնը կը խանգարէ, ուստի բնականաբար կը վեասէ նաեւ ամեն կարողութեանց, նախ իւր առաջին յիշողութիւնը կը կորսնցնէ, մասացիտութիւն մի կը տիրէ մտաց վերայ, ըմբռնումը և մտադրութիւնը կը տիարանայ, որով է կարող հաստատուն կերպիւ բան ուսանիլ կամ միտք պահել ամեն գործէ ձանձրութիւն կ'զբայ, ասպուշէ իւր տեսքը, թոյլ, մեղի և դանդաղէ ամեն բանի մէջ. վիճակէն, մնուն գէն ընկերութիւններէ եւ նոյն խակ իւր կեանքէն ալ դժգոհէ է. կը կարծէ թէ ամեն ինչ միաբանած են իւր թըշուառութեանը համար, միշտ տիսուր ու մելամաղձուտ է. քիչ անգամ անհաջոյ ժայիտ մի կը տեսնուի կնճռած գէմքին վերայ, այն ատեն կամ փառած ակաւանները և կամ գունատ ու նեխեալ ընտերքը երեւելով մարդը կը սոսկացնէն, այս վիճակիս մէջ շատեր կան որ լուսնոտած և յիմարած են: Ո՛հ, սրչափ խեղճէ մարդ որ թըշուառութեան մէջ երջանկութիւն կը փնտուէ, որ շարեաց մէջ բարիք կ'երազէ, որ մահուան մէջ կեանք գրանէլ կը կարծէ:

(Ըստ Հայութիոնի)

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Խիստ հին դարերու մէջ երեւելի փիլիսոփայք տարակուսեցան թէ արդեօք ովլէ ճշմարիտ իմաստունը:

Խորին խորհրդով իմաստութէ բնութիւնը քննեցին և սահմանելով զայն վճռեցին որ մարդիկ տիրապէս իմաստուն չեն կարող ըստուիլ. այլ այս բարձր ստորոգելին միմիայն Աստուծոյ կը տարսէի: Կամ զի իմաստութիւնը իւր մէջ

կը պարունակէ ամենագիտութիւն եւ ամենաբարութիւն. հետեւաբար իւմաստուն անուանեալ անձը պէտք է գիտնայ աստուածային և մարդկային ամեն գիտութիւն, իրաց և գոյից պայծառ ձանաշումն, երկիւղածութիւն յաստուածայինս, նաև բարսյականին ըստ ամենայն մասանց հմտութիւն պէտք է լինի, ոչ լոկ ուսմամբ, որ անօդուտ է, այլ գործնապէս իւր վարուց վերայ պէտք է ցոյց տայ ամեն առաքինութիւնն ժուժկալութիւնն, բարեխառանութիւնն, սրբութիւնն, արդարութիւնն, ճշմարտութիւնն և այլն. եթէ այսպէս մէկը գտնուի, կարող եմք ապահովապէս զայն իմաստուն անուանել: Բայց որովհետեւ այսպիսի ամենակատարութիւնն միմիայն Աստուծոյ կը վայելէ, ուստի տիրապէս միմիայն իմաստուն Աստուած է, յորմէ ամենայն պիտակ իմաստունք կ'իմաստնանան:

Բայց մարդիկ եւս իրենց տրուած կարողութեանց համեմատ երբ այլ և այլ իրաց մէջ ծայրագոյն կատարելութիւն կ'ունենան նոյցա եւս իմաստուն կ'ըստուի, բոյց ոչ խակապէս, մանաւանդ արդար ու բարի կեանք ունեցողներուն համար թէ Ասուրք Գրոց և թէ արտաքնաց մէջ գործածուած կայ:

Արդ՝ եթէ մէկը այս հանգամանքները չունենալով իմաստուն կը կոչուի, ծաղուարժանի է, զայնափիսին իմաստուն կոչողը կամ կը հեգնէ և կամ կը շողբորթէ. եթէ կը հեգնէ պէտք է հեգնութիւնը յայտնի լինի, խակ եթէ հեգնութիւն չէ, ուրեմն բացարձակապէս շղզբորթութիւն կեղծաւութիւն ցածութիւն եւ յիմարութիւն է. որուն անսացողն ալ ամենայի մի է, որ գովլեստ ընդունելու մափառութեամբ նենգաւորաց թակարդը կ'անկանի, և եթէ փոքրիկ վարկ մի ստանալու վերայ եր, զայն եւս կը